

ՏԱՍՆԱԲԱՆԵԱՅ

Ես եմ «Ծաղիկ» եւ ինձ գտա «Ծաղիկ» չպիտի հանձնաւ:
Իմ անունս պարտաւ սեղ զարուհակ բերանիդ պիտի առնէ:
Իմ փառսս կանխիկ պիտի դրէ:
Ամէն մարդ պէտք է յարգէ եւ գլխուն վրայ հասցնէ զիս:
Այ՛ ո՛ր պէտք է աչքը հեռէ իմ փառայիս, քո՛ւ աչք ունեցողից
առեք ելլայ:
Պէտք չէ իմ փառսս ձեռ կոկոռը լցնենք:
Պէտք չէ նեղանալ, երբ ձեր զրկած յոյսաւորները չսպուին:
Պէտք է ձայն անգամ չհանէք եւ գլխուն վրայ դնէք, երբ
ձեզի դէմ գրուի այս սրնակներուն մեջ:
Երբ զայս բարկանալ, պէտք չէ մեղանշէք:
Եւ երբ մեղանշեալ մօտ ըլլաք, պէտք է... քաջալս խմէք:

«ԾԱՂԻԿ» կը հրատարակուի ամէն օր արշալոյսին
Տնօրէն՝ Թ. ՄԱԳԱՆԵԱՆ

Հինգուրթի 15 ԱՊՐԻԼ 1909

﴿ زانچك غزتمسى ﴾ درعليه ده غلطه ده قورشونلى خاتمه نومرو ۷

Հասցէ՝ Ղալաթիա, Գուրչուհու խան թիւ 7

ԹՈՒՐԻՈՅ ԱՊԱԳԱՆ



ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Խմբագրութիւնս գոհութեամբ
կը ծանուցանէ իր բաղձալիւ ըն-
թերցողներուն թէ, «ԾԱՂԻԿ» իր
գտած ջերմ ընդունելութենէն
քաջայերուած՝ այսօրու չէ սկսե-
ալ պիտի հրատարակուի ԱՄԷՆ
(Ր) արշալոյսին ըստ առաջնոյն
իրը ԾԱՂԻԿԻ թիւ 10:

Անշուշտ մեր ազնիւ ընթերցող-
ները երկուշաբթի ի վեր դիտե-
ցին թէ՛ «ԾԱՂԻԿ» նպատակ չու-
նեցաւ, և այսուհետեւ ալ երեք-
շաբթի ունենայ, զաւելու անուան
ու ձեւին ներքեւ, անձնականու-
թիւններու, պատիւի, և կրօնի
հետ խաղալ, Եւրոպայի ընկու-
ստոր ակնկալութեամբ աս ու ան
անուանարկել, մէկ խօսքով թեր-
թը փողոցային լուսանկարներու և
գոհեցիկութեան հաւաքածոյ մը
չինել:

Ընդհակառակը մեր նպատակը
պիտի ըլլայ այժմէութիւն ունե-
ցող օրուան նիւթերը, Բաղադա-
կան, Ազգային, և Ընկերական,
զուարճալի ձեւի տակ հրամցնել
մեր նորաձաշակ ընթերցողներուն:

Անկողմնակալ ոգւով ձաղկել ու
մատնանիշ ընել ամէն բան որ
կեղծիք է, որ չարամտութիւն է,
և որ երկրին և ազգին պատուին
ու շահերուն վնասարէր է:

Գէթ մեր մասին մենք այսպէս
կ'ըմբռնենք զայնչուն ու երգի-
ծանքը:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Հետաքրքրաշարժ պիտի ըլլար
գիտնալ թէ ի՞նչ է Թուրքիոյ ա-
պագան, անանկ երկրի մը ա-
պագան զոր կրակի տուաւ Համիտ
իր փախուստին մէջ, որպէսզի
յաղթական նարոյններ աւերակներ
միայն գտնէ:

Ուստի դիմեցինք Բերայի նշանա-
ւոր րեալին քաջողին:

Կնիկը իր առջեւ դրուած կրա-
կարանին մէջ կտոր մը խունկ
նետելէ ետքը իր սովորական հար-
ցումը ըրաւ:

— Իսմի նէ՛ տիր է վրատըմ:

— Իսմի Թուրքիա:

Այս նախաբանէն ետքը հետեւ-
եալ յայտնութիւնները ըրաւ, ո-
րոնք իրաւ կամ սուտ չենք գի-
տեր մեղքը իր ճիտը:

«Բոլոր ազգերն ալ մէկ սիրտ,
մէկ հոգի երկրին աղէկութեանը
համար կաշխատին կոր, անանկ
ամէն գործի մէջ քիթերնին չխօ-
թելով: Բոլոր յեղափոխական
կուսակցութիւնները հետզհետէ կը
ջնջուին կոր, իրենց ունեցած
պաժապանները ծով թափելով, ո-
րովհետեւ ազգին սրտին վրայ Հա-
միտին պէս քար մըն ալ չկայ որ
տիկնամիթի պէտք ունենան:

Փողոցներուն մէջ մէկ հատ
չուն չկայ, ամէնքն ալ Համիտին
մեմլէքերը խշկուած են, հոն ի-
րեն ծառայելու համար:

Թագսիմի կիսախարսուլ զօ-
րանոցներուն տեղ հսկայ արարթը-
մաններ եւ թատրոններ չինուած
են:

Ոչ ոք զէնք կը կրէ քովը, ո-
րովհետեւ չնորհիւ ոստիկանու-
թեան գողի ջարդի և թալանի վա-
խը փարատած է:

Բոլոր փողոցները լայնցած,
փոս տեղերը լեցուած, երկու լո-

վերը ծառադարդ, կանացի ան-
րիքաւ անուանները թիւերու վե-
րածուած եւ մաքուր են:

Ստակած ձիերով թրամուէյնե-
րը վերցած եւ անոնց տեղ օմնի-
պիւսներ և օրօմուպիւսներ կը բա-
նին:

Ամէն փողոցի անկիւնը ոստի-
կան մը, ձեռքը նիզակ մը բռնած
պահակ կ'սպասէ:

Սուլթանը ամէն ուրբաթ սե-
լամըքի երթալէ զատ արձակ
համարձակ, չարթը քանի մը
անգամ ալ քաղքին մէջ սիւլիլ կը
չըջազայի, ժողովուրդին հետ
արքայաբար կատակելով:

Գլխաւոր պողոտաներու մէջ
հանրային ճէմիչներ կան հաս-
տատուած և ժողովուրդը ալ
ստիպուած չէ պատի մը տակ
կենալու ոտքերը իրարմէ բաց:

Թագսիմի եւ թէփէ Պաշիի
թաղապետական պարտէզները
եռապատիկ լայնցած, ձիորդն
ժողովուրդին տրամադրութեան
տակ են ամէն ատեն:

Ղալաթիոյ կամուրջը նոր ոճով
երկաթէ շինուած և առանց ան-
ցազինի:

Իրամական տուգանքի հաս-
տատում այն տուներուն որոնք
պատուհանէն փողոց կը թափեն
ոսկոր, քուրջի կտոր, աղտոտ ջուր
եւայլն: Այն աղբերը որոնք բա-
քէթ եղած վար կը թափին ա-
ւելի ծանր տուգանքի կենթար-
կուին: Նոյնպէս տուգանք կ'առ-
նուի այն անցորդներէն որոնք
կը թքեն փիՍ փիՍ կամ սիւմիթ
ուտելով փշրանքները գետին կը
թափեն:

Աճեմի Էշեկ ներուն և կովի
բեռնաբարձ կառքերուն իսպառ
կ'արգիլուի անցուղարձ չատ

եղած տեղերէ անցնիլ:

Բարձում Ղալաթիոյ Քէմէր
Ալթը, և Բերա Պիւլպիւլ տէրէ
Նէնի Չարչի, Մաճաու և այլ թա-
ղերու, թէեւ անոնք Համիտա-
կան ֆէրմաններով հաստատուած
ըլլան ժամանակին:

Բոլոր դազինները, թատրոն-
ները կէս գիշերէն ետքը կը
գոցուին, և առանց այր մար-
դու ընկերակցութեան տեսնուած
կին մը կը ձերբակալուի ոստի-
կաններու կողմէ, որոնք անմի-
ջապէս զայն պահականոց կը
տանին, և ոչ թէ իր տունը, ինչ-
պէս կ'ընէին հին օրերուն միա-
սին խաչմէ մը խմելու համար:

Արամ Թահաթահան իր հավիսին
կը հասնի, Ղալաթիոյ աշտարակին
վրայ պարտէզներ շինելով:

Գողութեան համար յատկապէս
կազմուած թաղի ջրհանկիրները
կը ջնջուին, քարափի, մաքսի և
մահալլէ համալներու քիթը կը
կտորի դադրելով մէկ մէկ տերե-
պիլի կտրելէ ժողովուրդին գըլ-
խուն:

Կարգ մը վ.Ա.ՃԱՌներ, որոնք
սովորութիւն ունէին իրենց ձայ-
նին ուժը փորձել առտուն մութ-
նուլուսուն, ասոր անոր քունը
խանգարելով՝ փողոցի անկիւնները
կենալով կը վաճառեն ապրանք-
ներն:

Բազմիքներէ կը վտարուին բո-
լոր րեկաքները, և անոնց տեղ կը
գործածուին կիններ, ուսմանական
սիւթէմով:

Մահաուէի և Խասդիւղի շոգե-
նանները. արեւ կեճեալ մը այրե-
լով, անոնց տեղը կը բանին ա-
րագագնաց փողբիկ շոգենաւակ-
ներ:

Բումէլի և Անաթուու Հիսար-

ներու միջեւ ահագին շարժական կամուրջ մը կը ձգուի, որուն վերայէն երկաթուղի կ'անցնի:

Օտար նամակատուները կը վերնան, և անոնց տեղ ամէն բանի կը հասնի օսմաննան նամակատուներ:

Ենթի շամիի կոնակը կը մաքրուի քիպապօններէն, և քսաննոց սափրիչներէն գեղեցիկ պողոտայի մը երեւոյթը առնելով:

Բոլոր փողոցներն ալ կը լուսաւորուին ելեկտրականութեամբ և բազմաթիւ քէյֆօններ իրարու հետ հազորդակցութեան կը դնեն զանազան թաղերը:

Հայոց Ազգային Պատրիարքարանը Դուռնաբուռէն կը փոխադրուի Բերա, և հայերը իրենց յարմար պատրիարք մը չգտնելով երկու օրը մէյմը տեղապահ կը փոխեն գուլպայի պէս:

Թիւսիւզ խաչիկ իր գործանունութիւնները ընդարձակելով գործակալական մեծ սենեակ մը կը բանայ, և կուենայ իր մասնաւոր օտկանը ծանօթ դաւեշտագրի մը խմբագրապետութեան տակ:

Միջրդատ Հայկազն լասթիկի կառքով կը պտտի իբրեւ միլիոնատէր դործարանատէր մը:

Արքահամ Այլազեան երուսաղէմի Պատրիարք կ'ընտրուի, իսկ Աբիկ Մուպահաճեան անոր փոխանորդը:

Գէորգ Եպ. Երէցեան, խոզով եկեղեցականութիւնը, Տիգրան Եէլքէնճեանին հետ աղամանցի վրայ մեծ գործեր կ'ընէ:

Ատանա, որ Համիտեան երկրաշարժէն կործանած էր, առաջուրէն աւելի գեղեցիկ կերպով կը վերաշինուի, և տէրութիւնը պարգեւաւոր սրբոյժ կը հաստատէ շատ զաւակ շինողներու միջև որպէսզի ջարդուած 6000 հայերուն տեղը բաց չմնայ:

Անատուրի բոլոր Բիւրտերը գոյալը չապիկ և սեքրի բանթալօն կը հագնին և առնուազն 3 լեզու կը խօսին կը գրեն:

Շատ մը գաւառներու վայրերը թուրքերէն, մուսլիմներ յոյներէն, մալ միսլիմներ հրեաներէն և դատաւորը հայերէն կ'ընտրուին, և այս քառակը կը կառավարեն ժողովուրդը եղբոր պէս:

Թուրքիոյ մէջ նախնական կրթութիւնը պարտաւորիչ կըլլայ, և այլեւս Վանքի, Մշիքի և այլ տեղացի պանդուխտներ, զինուորներ, չեն ստիպուիր հոսկէ հոնկէ ՀԱԶԷՐ ՄԷՔԹՈՒՊ մուրալու, որպէսզի հայրենիք խրկեն:

Պոլսոյ մէջ հաստատուած աշխատանքի տունը բարեգործական հսկայ հաստատութիւնը մասնաձեւեր կը բանայ գաւառներու մէջ և անտեղի անգործ մարդիկն ալ կ'սխիւն գործ գտնել:

Անատուրի ամէն կողմը երկա-

թուղիներ կը սուրան, պանքաներ կը գործեն, մեծ վաճառատուներ կը բացուին. վարուցանը չոգեւ շարժ մեքենաներով կըլլայ, գործարաններ կը բացուին, արարթմաններ և թատրոններ կը շինուին:

Վնուկը ա'լ յոգնած խօսելէ համբիշը վար գրաւ և ուրիշ ըսելիք մը ունենալնիս հարցուց:

— Ա՛խ, վնուկ հարցոցինք լալով, այդ ըսածներուդ ամէնքն ալ պիտի ըլլան արդեօք:

— Տղաքս, պատասխանեց վնուկը, քառորդը տալով սրկէ դուրս ելլելիդ նայեցէք. ես մինչև այսօր ըրած գուշակութիւններս սիկուրքա չեմ ըրած, և ձեզի համար ալ չեմ ընել:

Դրամը ցնծալով դուրս ելանք, սա հաստատ համոզումով որ ըսածները կրնան իրականանալ, քանի որ Համիտեան ինքնապաշտպանը երէկուան ըէֆիին յաջորդած է այսօր ՐէՇԱՏԵԱՆ կենսանորդ ըէֆիմը:

ԸՆԿԵՐ ԳՈԳՈՐ

ՀԱՄԻՏԻՆ ԵՐԱԶԸ

Գիշեր է, ոչ մէկ լոյս, ոչ մէկ շշուկ երևողի ամայացած շրջափակին մէջ:

Հեռաւոր նրբանցքի մը ծայրը վանդակապատ փոքր պատուհանով սենեակի մը մէջ, Համիտ երկաթ մահճակալի մը վրայ ընկողմանած խորունկ խորունկ կը մտածէ եօթանասուննոց ծխախոտը քաշելով, և երբեմն ալ մատներովը քիթը խառնելով:

Կրակը մարած աչքերը մերթ պահակ սպասող սուրճաւոր զինուորին կ'ուզէ և մերթ պզտիկ քեսրիի մը որ Համիտիկ ջուր լեցուած, ինչ հեգնանք, իրեն յատկացուած է:

Վիշտը եւ յոգնութիւնը բոլորովին ընկճած են զինք եւ սիր-սեմցուցած:

Սիկառ մը եւ կը խմէ և ահա զայն դեռ չմարած կը դոցուին աչքերը:

Բունը տարած է եւ կ'երազէ: Իր սիրական երևողն է նորէն, Հիւնքեար օտաւիին մէջ, իր ոսկի դահուլ վրայ նստած. երկու քովը արծաթ ափսէներու մէջ և բերքական լեցուն վեցհարուած եաններով:

Կամաց մը կարմիր վարագոյրը կը բացուի և Թահիր փաշա կ'երևայ:

— Ինչ ըրիր Թահիր:

— Տէր արքայ ծառանիդ ձեր

բոլոր հրամանները կատարեց, պահպան զօրքը առանց բացառութեան պատրաստ է ձեր թանկագին կեանքը պաշտպանելու, միայն թէ տէր արքայ 3000 ոսկիի պզտիկ դուռնարի ևս պէտք կայ բոլորովին հաւատարիմ շուն դարձնելու համար զանոնք:

— Ինչ կեցեր ես ճընգըր, ատալ ինծի հարցնելիք բան է, շուտ գնա պէտք եղած դրամը առ, ըրէ լմնցուր ժամ առաջ:

— Գլխուս վրայ տէր արքայ: Թահիր կը մեկնի և քիչ ինտոյ ներս կը մանէ Պիւրհանէտին դաւակը:

Դուռն ինչ ըրիր ծօ,

— Ա՛յն բան լմնցաւ հայրիկ, իւրաքանչիւրին դրամը ձեռքովս բաժնեցի որ խամին չըլլայ, Պոլսոյ մէջ զօրք մը չկայ որ քեզ պաշտպանելու երդուեցած չըլլայ:

— Աֆէրիմ տղաս, ես արդէն առաջուց դուշակած էի հօրդ արժանի դաւակ մը ըլլալդ, դուռն միւս օւղորստուգներուն չես նմա: Իր գիտեմ, ասոր համար ես ալ միւս գահաժառանգները կամաց կամաց մաքրելով քեզ յաջորդ պիտի կարգեմ ինծի:

— Ինչեր կ'ըսես հայրիկ, քու կեանքդ պէտք է ինծի, ես ինչ ընեմ թագաւորութիւնը երբ դուռն չկաս, հայրիկ ես հիմա հարեմ կը քաշուիմ կոր հանդստանալու, հրաման կուտաս:

— Գնա զաւակս և քէյֆիդ նայէ. բայց մի մոռնար սա խրատս, կինը միշտ մարդուս թշնամի է, շատ ետեւէն իշխալու չի գար, ես կրնեմ ատելուս համար է որ ասանկ ամէն բանի կրնամ կոր հասնիլ:

Պիւրհանետին հազիւ թէ մեկնած վաղընի տէր վահանթի ներս կը մտնէ և դէմքը գետնին քսելով արարերէն բաներ մը կը մրմռայ քիթին տակէն:

— Վահանթի բերած լուրերդ աղէկ են նայինք:

— Ձեր կարծածէն շատ աւելի աղէկ տէր արքայ:

Ըստ ձեր հրահանգներուն տասը հազարի չափ պօշ մարդ գտայ, զուլանին ճերմակ սալաշրքուր կապել տուի և իբր սօճքա ժողովուրդին մէջ մէջ ցրուեցի որ շէրիարք քարոզեն:

— Վահանթի, շէրիարք՝ ասանկ մեզի գործիք ընելնիս չելէ իմացուի հա՛, ետքը փոստերնիս կը հանեն իրաւ որ:

— Անհոգ եղէք տէր արքայ, ես անոնց բերանը ոսկիով կ'զգեցի, իւրաքանչիւրին 10—15ական ոսկի եմ տուել, որինք քիչ մը թուլնայ նէ կտոր մը կը սեղմեմ, և կամ ծովին տակը կը խրկենք, չըլլա՞ր:

— Չէ՛, ծովին տակը չըլլար,

Երևողը քիչ կուգայ որ անանկ իզոյ պէլի ըլլալիք տեղեր խրկեմ դուռն այլեւս ատ գործը ինծի թող և կտակածելները հոս խրկէ ես զիտեմ ընելիքս:

Իոյն պահուն խալալը մը ներս կը մտնէ արծաթ ափսէի վրայ սուրճ բերելով:

Համիտ իսկոյն կը քաշէ ըէֆով վէրը և գետին կը փռէ խեղճը:

Ըէֆովի ձայնէն երկու պալատականներ կ'երեւան վարադոյրին ճեղքին մէջ, զանոնք ալ կը մաքրէ մեր ցիլանճի Համիտը:

Այս գործը գաւաթ մը ջուր խմելու պէս տեսնելէ ետքը նորէն կսկսի խօսակցիլ Վահանթիին հետ:

— Ա՛լ վախ մախ չկայ տէր արքայ, զինուորը մեզի հետ, կրօնաւորները մեզի հետ. անդին ով կը մնայ ալ, ժողովուրդը. ան ալ ոչխարի՝ պէս է, անկէ վախնալիք չունինք:

— Մինակ հոյերէն կը վախնա՛ կոր, շուն մարդիկ են ատոնք կեղեկ նորէն ինծի մեռցնել կը փորձեն, ան քօսլն չկայ, Բիւրսէ. ատ եաման բան է. էն առաջ անկա մաքրելու է:

— Վազը իսկ տէր արքայ, դուք միայն հրաման ըրէք:

— Սալթըն հա՛, մէկայնեք կը կատարեն ետքը, գործը պիւս սիւս քիւն կաւուրի:

Հրաման ինծի տէր արքայ, հիմա իսկիւտարի քէքքէն պիտի երթամ մէյմը աչքէ անցնելու համար, ներեցէք տէր արքայ, սալաշրքուրը հատաւ, նոր պիտի առնեմ, 1000 ոսկիի չափ զրամի պէտք կայ:

— Թող արուի:

Համիտ պահ մը առանձին կը մնայ և գլուխը ձեռքերուն մէջ առնելով կը մտածէ:

Այդ պահուն իր էն պզտիկ զաւակը կամաց մը ներս մտնելով կը ժօտենայ իրեն և կուզէ համբուրել:

Համիտ կարծելով թէ այդ եօթը տարու տղան զինք սպաննելու միտք ունի ըէֆովէրը քաշելուն պէս արեան ճագաղիքներու մէջ կը ձգէ հեգ անմեղ մանկիկը:

Ինչ յետոյ իր սիրական զաւակն սպաննուիլ իմացող մայրը խնայողորմաբար կը վազէ, արքային մօտ, բայց հազիւ երկու քայլ առած՝ ինքն ալ գետին կը փռուի զիսպաստ:

Սարսափելի սրտեղ վիճակի մը մէջ է, անդադար քիթը կը խառնէ:

Արծաթ զանգուկ մը առնելով կը հնչեցնէ:

Մէքրուպճի պաղին իսկոյն ներս կը վազէ:

— Սեւանիկ խրկուելիք 5,000,000 ոսկիի չէքերը պատրաստեցի՞ր:

— Այո, դեռ... ոչ... հիմա... տէր իմ...

— Հէ՛... —

Եւ այս Հէ՛ն ծայրայեղ ջղա-
գրգռութեամբ բերնէ դուրս
պոռթկացած՝ կ'արձագանգէ ամ-
բողջ սրահին մէջ։

Համիտ բարկութենէն, կրո՛ղ.
չուն կը կոչէ. մանկ կըլայ գնաց,
ժամանակին պէտք էր հասցնել,
հիմա անոնք ճամբայ ելած են,
վատ, մատնիլ կորսուէ սրկէց։
Եւ հրաշք այս անգամ հրազէնի
չդիմեց, այլ բռնեցքը վերցնելով
գլխուն իջեցնելու համար երկու
քայլ յառաջացաւ։

Հարուածը անկողնին քով պա-
հակ սպասող զինուորին գլխուն
իջած էր ուժգնօրէն, որնոր յան-
կարծակիի եկած հրացանին կո-
թովը լաւ մը կը տիէ նորին Վե-
հափառութիւնը։

— Աֆ էթ օղլում, տէ՛նէթլի
տիւն կէօրիւեօրում. աման եա-
նընօրում պիր աղ սու. Ու զին-
ուորին երկնցուցած քեսքին շրթ-
ներուն դնելով կլկկ կլկկ ջուրը
քամեց տարիներով արիւն քա-
մողը։

Ո՛վ դարձ, ո՛վ բարձ։

ԸՆԿԵՐ ՈՐՏԱՇ

ԿԱՄԻԹՆԵՐ

Կամբէ, բայց նայե ու
մասնեղ ոսկորի չգան։

Համ տ իր գահընկեցութիւնը
աւետող պատուիրակներուն ար-
տասուալից աչքերով խնդրեք է
խնայել իր կեանքին, ըսելով որ,

«Ես եղբայրս 33 տարի թու-
չունի կաթով մեծցուցի, շոյեցի
փայփայեցի և կարելի եղածին
չափ իր հանգստութեան հոգ տարի։

Թերթերու գրաշարները սխալ
շարեր են EX Սուլթանին խօս-
քերը զոր մենք ստուգած ենք
հետեւեալ կերպով։

«Ես եղբայրս 33 տարի դուռ
չունի կարթով մեծցուցի, խոցեցի,
փայ, փայ արեցի, և կարելի ե-
ղածին չափ իր յաւիտենական հան-
գիստին հոգ տարի։

Թու անամօթ, երես տուեր են
եղեր դեռ աստուռ, ալ կուղէ կոր։

★ ★ ★ Կեցցէ Սուլթան Մէհմեդ
որ զահ բարձրացաւ չարճարացաւ
իր առաջին իրաւուն ժողովուրդին
օգտին ըրաւ, քաղաքին մէջ հրա-
զէն պարպելը իսպառ արգիւնելով։

★ ★ ★ Արշարունի Արաղան խե-
ղացութիւնը ունեցեր է առջի օր
հիւանդանոցները երթալով ազա-
տական հերոս վիրաւորներուն այ-
ցելութիւն տալու։ Անոնցմէ իւ-
րաքանչիւրին սնարին քով դատ
զատ կենալով միտթարական խօս-
քեր զրուցեր է։

Չէ մոռցեր նաեւ իր մասին չը-
նորհակալութիւն յայտնելու, թէ
իրենց Պոլիս գալովը ինքն ալ ա-
ղատ չունչ առաւ, և արձակ հա-
մարձակ կրնայ քաղքին մէջ շր-
ջագայիլ։

Տեսա՞ր մի Արաղան, ուղես նէ
ինչպէս կընես ամէն բան Եօլսլը։

Բայց հոգ չէ այս ալ մեծ բան
է, տաւոլիս, տաւոլիս քալել սկսիլդ։

★ ★ ★ Ու. Սեւակ և Շահան
Նաթալի ձեռք ձեռքի տուած զօր-
մը ունին ջնասկցուածները ժողո-
վուրդին հասկցնելու։ Զօր մըն ալ
ընէիք Տէ պարոններ, սա չկար-
դացուածները կարգացնել տայիք
ժողովուրդին։

★ ★ ★ Երկու բարեկամի միջև.

— Բարեկամ սահմանադրու-
թեան վերադարձին, և Համիտեան
րէժիմին կործանումին ընաւ հա-
ւատալս չի գար կոր։

— Ես ալ այդպէս էի եղբայր,
բայց հիմա լուրորովին համոզուած
եմ իրականութեան, որովհետեւ ե-
րեքշաբթի օր ժամը իննին Հրանդ
Ասատուրը տեսայ որ իր արար-
թմանէն դուրս կելլէր։

★ ★ ★ Զգօն Փափազեան, Տպա-
րանապետ և «Խաղաղան» ի ար-
տօնատէրը անցած օր պատերազ-
մական պաշտօնարանը երթալով
տեսակցութիւն մը ունեցեր բան-
տարկուած սօցթաներու հետ։

Սեւակի զինուորները տեսնե-
լով որ այս մարդը իլալի հանելու
մարմալէն բռնուած է, իր իլալի
մը զինք ալ բանտ կը նետեն քանի
մը օրուան համար։

★ ★ ★ Ազատականները լաւ օրս
մը բրին առջի գիշեր, երբ Թաուա
Պաշի Զապէլին տունը կոխելով,
հոնկէ հանեցին Բեամիլ փաշայի
պլակի աղան, Օսմանը, որ հան-
րատուներու հերոսը ճանչցուած
է Բերայի մէջ. Դժբախտաբար
ամենէն աւելի տուժողը խեղճ
Զապէլը եղաւ։

Հոգ չէ աղջիկս, Աստուած մէկ
դուռը կը գոցէ նէ ուրիշ տեղէ
մը կը բանայ, թէ և այդ դուռը,
80 ոսկինոց օդեր բերող դուռը՝
պէտք էր որ գոցուեր, բայց ինչ
ընես։

★ ★ ★ Համիտի կիներէն փոքր
մաս մը Թօփ Գաբուի պալատը
զրկուեր է ցնոր սնորինութիւն,
իսկ մեծ մասը ինք արդէն քանի
մը օր առաջ Զամլըճա խրկած է
եղեր։

Խեղացի մարդ չիտակը, տեսնե-
լով որ սնանկանանալու մօտ է
ապրանքին մեծ մասը ուրիշի
վրայ ըրեր է, առնելիքներն
խուրովներուն ձգելով։

★ ★ ★ Երևողի փափկասուն
Սուլթանուհիները, որոնք հակա-
ռակ յետադէմ Համիտին ջանքե-
րուն, եւրոպական նորը դաս-
տիարակութեամբ մը օժտուած
են, առջի օր տեսնելով որ իրենց

չեանքին միասող չկայ, պաշարող
զինուորներուն լէմօնաթ, Պիսկիւի,
հրամցուցեր, և դաշնակ զարկեր
են։

Աֆէրիմ հերոս աղջիկներ, երբ
տեսան որ Համիտէն ա՛լ օգուտ
չկայ ուրիշ դուռ ափ առնել սկսան,
սուրացող գնդակներու մէջ ան-
վախ նստած բռնաբէլի բանակին
տիւտիկը չալելով։

★ ★ ★ Բումէլի բանակը, որ
Պօլսոյ ժողովուրդին վարժապե-
տութեան պաշտօնը ստանձնած է
բարեխախտաբար, երէկ գիշեր
դահակալութեան առթիւ Յ ժամ
չըջագայելու հրահան տուաւ Պօլ-
սոյ պէպէկներուն։

Պոլսո քեզի Շէվքէթ Փաշա
եթէ սա փացած տղաքը կարգի
բերես։

★ ★ ★ Սեւակի մէջ ձեռքաւա-
լեր են Եռասուֆ փաշա անուն
սինլքօր մը, որուն գրպանէն
տուփեր գտնուեր են վրանին
գրուած, ոսկեգօծ դեղալատեր
ժամը մեկ հատ մը առնելու հա-
մար։

Համիտին վարպետ ասադճա-
գործ, և լաւ նշանածիք ըլլալը
գիտէինք բայց դեղագործ երբէք,
ան ալ իմացանք, նայինք դեռ
ինչ բարեմասնութիւնները երևան
պիտի ելեն այս ջնաշխարհիկ թա-
գաւորին։

★ ★ ★ Վեհ. Սուլթանը մօտերս
մտադի է եղեր Անատուրի գա-
ւառները պատելու։

Աբանչի մտածում չիտակը,
ինչո՞ւ Պօլսեցիներուն ամէն օր
պոլլրամ ըլլայ Տէ, ինչո՞ւ Անա-
տուցին տարիներով օտուճ բռնէ,
ան ալ մեզի չափ օրտանց կը սերէ
իր թագաւորը և փառիշտն կը
պօռայ հոգիին բոլոր թափովը։

★ ★ ★ Ծարժուն բանակի վերին
հրամանատարութիւնը որոշեր է
ասկէ ետք չձեռքաւորուածներուն
անունները հրատարակութեան
տալ, քանի որ Պօլսոյ բնակչու-
թեան մեծագոյն մասը բնակարան
փոխելու վրայ է։

★ ★ ★ Ինչպէս գրէր էին թեր-
թերը Ծաղիկի տօրէն տպարանա-
պետ Ռոզոս էֆ. Սագանան, որ
զինուորական վիրաբոյժ ալ եղած
և պատուուած գնդապետի աստի-
ճանով, անցած շաբաթ օր Բերայի
պատերազմին կարեւոր ծառայու-
թիւններ մատուցած է վիրաւոր-
եալներուն վիրադարմանութիւն
կատարելով։

★ ★ ★ Հիւանդանոցի կառավա-
րութեան տրուած հացագինը որ
Մարտ ամսուն 18,000 զըշ էր,
Ապրիլի համար 9000 իջեր է
յանկարծ։

Ներքին գործոց նախարարու-
թիւնը անշուշտ կարուէ դարման
մը կը տանի հիւանդանոցին այս
թշուառ վիճակին, որուն հոգը
Համիտ ձեռքովը տալէն ետքը,

մատովը ուղեց աչքէն հանել։

★ ★ ★ Յաւով կը լսենք թէ Ան-
տոն էֆ. Կէօչէ Օղլու ևս բռնուեր
է Սեւակիէն Պոլիս անցած խա-
ֆիէյաժողովտուք անուն համա-
ճարակէն։

Արագ կաղախան ելել կը մաղ-
թենք նորին վսեմութեան, որուն
վիճակը չճանրացնելու համար չեն
իմացուցեր Համիտի քախլան։

★ ★ ★ Վճռաբեկ ատենի անդամ
Արիֆ պէյ առջի գիշեր ստիպուած
ըլլալով քեսքսիօնէն Նէմէտտին
Մօլլային տունը երթալ, ականջ
չէ ուղէր կախել իտարիի Եօրֆի-
յիին, և պահակ զինուորն ալ
ստիպուեր է հրացանը քաշելով
անդին իրկել Արիֆ բէյ։

Կրակին հետ կատակ ընել չըլ-
լար։ Թող էշ նահատակ Արիֆը
խրատ ըլլալ մեր կարգ մը յան-
դուգն երիտասարդներուն, որոնք
իրենց ծըմբին մէկ քմահաճոյքը
գոհացնելու համար խենդի պէս
փողոց կը նետուին գիշեր տուն։

★ ★ ★ Երևողի ներքինապետ-
ներէն Նատիր և Հալիէր աղանե-
րը Համիտէն առաջ ուղեր են կը-
ծիկը գնելով անձերին աղատել։

Այս փախուստին ի վարճ Համիտ
թուրեր է անոնց երեսին զինքը
այսպէս վատաբար լքելուն հա-
մար։

Կերեայ իր բեռը շատ ըլլալուն
ուղեր է մարդը իր սիրականե-
րուն հետ փայ ընել։

★ ★ ★ Նկատելով որ կղզի
բանտարկեալները ա՛լ կը բաւէ
որչափ որ օգափոխութիւն ըրին,
պատերազմական պաշտօնատունը
պիտի բերուին եղեր, Ազատու-
թեան պալլաւը տօնելու համար
ասոնցմե աւելի՛ պէյի գուրպան
չէինք կրնար գտնել կարծես։

ՄԵԿԵՈՒՄ

Առջի իրիկուն զինուորական
ճէպընթացով դէպի Սեւակի ու-
ղերեցան տէր և Տիկնայք Ապ-
տիւլ Համիտ իրենց սիրիւ մը
զաւկըներով։

Շատ մը հակակիրներ մինչև
Սիրքէճի գալով քար մըն ալ ե-
տեւէն մաղթեցին ուղերորներուն։

Համիտ շատ յուզուած էր, և
ցտեսութեան խօսքերուն գլխու
նշանակալից շարժումներով կը
պատասխանէր կարծես ըսել ու-
ղերով

«Երբայս կայ, գայս զկայ, սաղ
սեյամէք հոն հասնիս ինչ զկայ։»

ԿԱՐԵԻՈՐ

Կարգացէ՛ք չորրորդ էջին վրայ
օրաթերթ «ԾԱՂԻԿ»ի բաժանոր-
դագրութեան նոր պայմանները։

ԱՐՏՈՆԱՏԵՐ Ա. ՍԱԳԱՆԱՆ

ՏԳԱՐԱՆԱՐԿՈՒՄ Ի. ՄԱՐԿԵՆԱՆ

«ԾԱՂԻԿ» ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Պոլսոյ	համար տարեկան	45	դրուշ .
»	» վեցամսեայ	25	»
Դաւառի	» տարեկան	60	»
»	» վեցամսեայ	35	»
Արտասահմանի	»	13	ֆր .
»	»	8	»

Ոչ ոք զօրով բաժանող կ'արձանագրուի:
Դրամը կանխիկ չղկողները եւ մեր փառան ուսողները կ'անիծենք եւ... կը խայտառակենք

La Grande Fabrique



1908Ի ԶՄԻԱՆ ԵՒ ԱՇՆԱՆ

ՆՈՐՈՅԹՆԵՐԸ

Փ Ն Տ Ո Ե Ց Ե Ք

Շ Թ Ա Յ Ն

ՎԱՃԱՌԱՏԱՆՑ ՄԷՋ

ՊՈԼԻՍ ԵՒ ՂԱԼԱԹԻԱ



ՎԱՅԵԼՉԱՍԵՐ ԿԻՆԵՐԸ

ՈՐՈՆՔ Կ՝ՈՒՋԵՆ ՊԱՇՊԵԼ

ԻՐԵՆՑ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ

ՊԵՏԻ ԵՒ ԱՄԷՆ ՕՐ ԳՈՐԾԱՅԵՆ

ՃԵՄԱՐԻՑ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆԸ

ԿԼԻՍԵՐԻՆՈՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ՀՆԱՐՈՒՄԸ 1860

ԱՄԵՆԱՇԻՆ

ԳԵՂԵՑԿԱՅԵՆՈՎ ԶԵՄԵԼ



ԿԸ ԳՏՆՈՒԻ —

ԴԵՂԱՐԱՆԵՐՈՒ — ՀՈՏԵՂԻՆԱՅ ԽԱՆՈՒԹՆԵՐՈՒ —

— ՊԱՋԱՐՆԵՐՈՒ ՄԷՋ —

ԳՆԵԼՈՒ ԱՏԵՆ Լաւ Ուշադրութիւն Ընել —

— ՎԱՃԱՌԱՏՆԵՐԵՆ ԵՒ ՄԵՐԺԵՂ —

ԿԵՂԾ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ —

ԲՐՆՉՓՈՇԻ

ՕՃԱՌ

ՍԻՄՈՆ

ՔՐԷՄ ՍԻՄՈՆ

ԱՌԱՆՑ ՊԻՍՏՈՒԹԻ

ԲԱՑԱՐՉԱԿԱՊԷՍՏԱՔՈՒՐ

Ժ. ՍԻՄՈՆ - ԲԱՐԻՋ

Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, բայց էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անխիղ եւ անհամար ծառայութիւններ կը մատուցաւ. նէ, մինչդեռ գէշ տեսակէ սեքենայ մը անվերջ զժողովեալն է. առաջադիւրս աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Ե Ր

Հայրապետի ԿԱՅՍ. ՊԱՆՈՍԱՆ The Singer Manufacturing Co

մեքենան լաւագոյնն է. սոյն մեքենան ամէնէն աւելի կատարելաւ գործուածը, հաստատունը եւ դիւրագործածելին ըլլալուն՝ բոլոր վանդակ աշխարհի մէջ՝ ամէն ոք Սինգլերի մեքենաները կը գնէ:

Ձեռքի, ոտքի, ու ոտքի եւ ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին:

ՍԻՆԿԵՐԻ մեքենաները կը ծախուին մի միայն Սինգլեր Ընկերութեան վաճառատանց մէջ՝

- | | |
|---------|---|
| ԲԵՐԱ | 1. Մեծ փողոց, Պօն Մաշէի դէմ, Թ. 343 և 343 կրկին. |
| | 2. Մեծ փողոց, Կայաթա Սէրայի լիսէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | 1. Սինկեր խան, Թիւնէլին ետեւը. |
| | 2. Գարաքէօյ, Թրամիլէյին կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | 1. Սուլթան Համամ, Թ. 2 |
| | 2. Սուլթան Պէյադիա, Թրամիլէյի կայարանին դէմ, Թ. 2 |
| ՍԵՐԱՍԱՐ | 2 արշը Պօլու, Թ. 120. |

ՇԱԲԱԲԱԿԱՆ ՄԱՍԵԱՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Դասերը եւ նորոգութիւնք ձեռք.

Կատարեալ երախաւորութիւն:

Մասաճիւնդեր գաւառաց բոլոր քաղաքներուն մէջ:
Սինկերի Ընկերութեան կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա Մեծ Փողոց, Թ. 343 և 343 կրկին, Սարգիս Պէյ Տիւզօղլուի տունը:



MAYER-ՄԱԵՐ

ՂԱԼԱԹԻԱ ԵՒ ՊՈԼԻՍ

ՀԱՆԴԵՐՉԵՂԵՆՆԵՐՈՒ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶՄԵՆՆԱՅԻՆ ԶԳԵՍՏՆԵՐ

ԿԻՆԵՐՈՒ, ԱՅՐԵՐՈՒ ԵՒ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

ԱԺԱՆ ԵՒ ԴԻԻՐԱՄԱՏՉԵԼԻ

ԴԻՄԵՅԼԻ ԵՒ ԳՈՇ ՊԵՏԻ ՄՆԱԲ

ԴԵՂԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐ
Շ Ի Շ Ե Ր

(Verres pharmaceutique)

Դեղարաններու և դեղորայքի վաճառականներուն համար մասնաւոր շինուած շիշերը մինչև հիմա Հրեայ վաճառական մը մօտօք ըրած էր: Այժմ ուրախ ենք յայտարարելու որ տիար Մկրտիչ Պողոսօֆ (Աշըր Էֆէնտի խան, Թիւ 27 գրասենեակը) ձեռնարկած է այս գործին և ունի ճոխ ու այլ լազան մթերք մը այդ կարգի ամէն կերպ շիշերու և կարող է մրցիլ ամէն կերպով: Վստահ և ապահով ենք որ թէ՛ Պոլսոյ և թէ՛ գաւառի մեր բոլոր Հայ դեղագործները և ճոկիւսները պիտի փութան իրենց գնումը ընել այս Հայ և այս ճիւղին մէջ մէկ Լոտիկ առևտրական տունէն, քաջալերելու համար Հայ ձեռնարկուն որ միւսնոյն ատեն ամանութիւնը բնաբան ընտրած է իրեն:

ԲԱՍՄԱՐԿԵՆՑ ԱՏԱՄԱՐԱՐՈՒՄԸ

ՏՈՒՔՈՒՄ Մ. ԱՅԱՆԵԱՆ

Վկայեալ Բարիլի համալսարանէն, և անձնական ատանաբայութեամբ շանկայիչատակ Մուղաֆէրէտիին Շահին:

Բերա Մեծ Փողոց, ռուսական դեսպանատան դիմաց Սիթէ տը Սիբի, ուր կը դարձանէ ամէն տեսակ ակուայի, ինտի և բերանի հիւանդութիւններ վերջնական ընդունուած մէթոտներով, կեղծ ակուաներ սան քրօշէ է սան բլաք տաք տարի ապահովութեամբ:

Սոյն դարձանները կը կատարուին Գաղղիական և Ամերիկեան ամենալիւրջին հնարուած գործիքներով, որով ենթակալն՝ ամէն տեսակ գործողութիւնները զիտի ընդունի, առանց ցաւի և առանց քնացուելու: Դարձմանատունը Բարիլեան մասնագիտական վերջին սխալէմով, իր տեսակին մէջ եղական է: Այցելեցէ՛ք և դատեցէ՛ք: